


ք. Երևան

25.06.2020թ.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 34/14-5/10581-20, ՀՀ շրջակա միջավայրի 3/02.2/5113-2020, ՀՀ էկոնոմիկայի 03/6054-2020 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության 20678-2020 և Ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության 20678-2020, Քաղաքաշինության կոմիտեի 06/11.2/3292-2020, Կադաստրի կոմիտեի ԴՍ/2610-2020 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի (Շաղատ բնակավայր) հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Սիսիան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից **0.017028 հա** արոտավայր (կադաստրային ծածկագիր 09-069-0001-0001-ից) և բնակավայրերի նպատակային նշանակության **0.06569 հա** այլ հողեր (կադաստրային ծածկագիր 09-069-0002-0013-ից) փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության՝ հրդեհամարման ինքնաշխատ համակարգի շինարարության համար:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ. Տերտերյան

քարտուղար՝



Մ. Մկրտչյան


ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<< ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՂԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Ղեկավարվելով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշման դրույթներով կազմված հողաշինարարական գործի նյութերով նախատեսվում էԿ-ի հակահրդեհային անվտանգության համար իրականացնել ջրավազանների կառուցապատման աշխատանքներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքում առկա են հողեր, որոնց նպատակային նշանակության փոփոխությունից հետո կարող են տրամադրվել ավագանների կառուցապատման աշխատանքների և հողհատկացման համար, ուստի անհրաժեշտ ՀՀ Սյունիքի մարզի Միսիանի համայնքի Շաղատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողատեսքից՝ 0.065690հա և գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրերից 0.017028հա հողամասերը փոխադրել՝ էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր նպատակային նշանակության՝ էներգետիկայի հողեր գործառնական նշանակությամբ:

Քաղաքաշինության և տնտեսության
ոլորտը համակարգող բաժնի պետ՝


 Ս. Հովհաննիսյան
07.07.2020թ

ՏԵՂԵԿԱՆՔ

<< ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՂԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Միսիանի համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Միսիանի համայնքի բյուջեում եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Քաղաքաշինության և տնտեսության
ոլորտը համակարգող բաժնի պետ՝

 Ս. Հովհաննիսյան
07.07.2020թ


Մ 1:5000

Բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերից (փոխարկող տարաք 1) 656.90քմ, իսկ գյուղատնտեսական նպատակային նշանակության արտավայրեր գործառնական նշանակության հողերից (փոխարկող տարաք 2) 170.28քմ փոխարժեք ենթագետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության ենթագետիկայի հողեր գործառնական նշանակության

ՀԱՏԱԿԱԳԻՃ



Հաստատվում են Երևանի համայնքի ղեկավարի Ա. Սարգսյանի « 2020թ.



1 656.90քմ

Ենկույնների թվում	Կտրվելու արևմտյան կողմի վ	Գնալիս թվեր	
1	8578166.4041	4382654.6432	30.89
2	8578166.8230	4382685.5286	27.31
3	8578194.1307	4382685.5860	25.82
4	8578181.8458	4382662.8851	7.58
5	8578181.7985	4382654.3069	14.4

2 170.28քմ

Ենկույնների թվում	Կտրվելու արևմտյան կողմի վ	Գնալիս թվեր	
1	8578520.1409	4382720.6848	5.68
2	8578521.6056	4382726.1721	33.2
3	8578552.6389	4382737.9595	1.21
4	8578552.5105	4382736.7556	4.85
5	8578552.1411	4382731.9183	33.91

Կատարող Ա. Կարապետյան